


8181

3X72(47.925)

2-24



29.15/47.925

3-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ. (Բ) ԿՈՒՍ.

ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

1 8 SEP 2013

3K02(47-925)

2-24 *uy*

1 DEC 2009

24 SEP 200

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄ. ԿՈՒՍ. (Բ) ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԻԴԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ



6965-57

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929

8787

10329

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բ)
ԽՆԴԻՐՆԵՐՆ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ**

(Հ. Կ. Կ.(Բ) Կենտկոմի V (նոյեմբեր 1928 թ.) պլենումի բանաձևը)

ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՅՅՔԱՐԻ ՇԻՄՆԱԿԱՆ ՅԵԼԱԿԵՏԵՐԸ

I.

Պրոլետարական հեղափոխության զարգացման ներկա ետապը խորհրդային Միության կյանքում բնորոշվում է դասակարգային պայքարի սրմամբ, վորը պայմանավորվում է մի շարք ֆակտորներով: Նախ՝ մեր տնտեսության վերակառուցման աշխատանքների ավելի և ավելի խորացմամբ, արդյունաբերության և առևտրի սոցիալիստական հատվածների առաջխաղացման տեմպի ուժեղացմամբ, գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների ծավալումով, վոր գալիս են հարվածելու քաղաքի նեպմանին և գյուղի կուլակին, և ապա խորհրդային և կապիտալիստական աշխարհների միջև գոյություն ունեցող հակասությունների սրմամբ, վոր ուժեղացնում է մեր չերկրի կապիտալիստական տարրերի ակտիվությունը:

Բավական է հիշել Շախտիի գործը, կուլակային տարրերի ընդդիմադրությունը խորհրդային պետության ձեռնարկումներին անցյալ տարվա հացամթերումների ժամանակ, նույն այդ տարրերի հաճախակի չեղումներն ընդդեմ խորհրդային հասարակայնության

Գրառեպլար № 1746 ր. Հր. 952 Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—Պ. 242

և մեր կուսակցութեան ու կառավարութեան քաղաքականութեան, ինչպես նաև դործադրած սպանութիւնները գյուղթղթակիցների և իշխանութեան ներկայացուցիչների, հրկիզումները կոլտնտեսութիւնների, խանգարումները հողաշինարարական աշխատանքների և այլն, և այլն, վորպեսզի կասկածից դուրս լինի թշնամական տարրերի ակտիվութեան աճումը:

Այդ հակախորհրդային ակտիվութիւնը նրանք յերևան են հանում վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական և իդեոլոգիական գծով: Նրանք շատ լավ գիտակցում են, վոր տնտեսական պայքարը չի կարող ունենալ հաջողութիւն, յեթե չտարվի համապատասխան կերպով քաղաքական և իդեոլոգիական պայքար: Ահա թե ինչպես ե բնորոշում նրանց պայքարը մեր կուսակցութեան 15-րդ համագումարը:—

«Գյուղի և քաղաքի մասնավոր կապիտալիստական խավերը, վոր զոգվում են մեր խորհրդային ու տնտեսական ապագաբառի բյուրոկրատական վորոշ տարրերի հետ, ձգտում են ուժեղացնել իրենց ընդդիմադրութիւնը բանվոր դասակարգի առաջնութեամբ հանդիպ, ջանում են պրոլետարական դիկտատուրային թշնամական ազդեցութիւն գործել ծառայողների ու մտավորականների, վորոշ խավերի, ինչպես նաև տընայնագործների և արհեստավորների, գյուղացիների ու բանվորների հետամնաց շերտերի վրա: Այդ ազդեցութիւնն արտահայտվում ե նաև կուլտուր-քաղաքական և իդեոլոգիական բնագավառում (սմենովեխականութեան քարոզը, կուլակային «գյուղացիական միութեան» լուղունգը,

շովինիզմը, անտիսեմիտիզմը, բուրժուա-դեմոկրատական «ազատութիւնների» քարոզը և դրա հետ կապված՝ յերկու կուսակցութիւնների մասն-բուրժուական ոպպոզիցիոն լուղունգը և այլն»:

Իրենց ազդեցութիւնը քաղաքի և գյուղի աշխատավոր զանգվածների վրա տարածելու և պահելու համար՝ մեր յերկրի բուրժուական տարրերը՝ կապված փախտական բուրժուազիալի և միջազգային կապիտալի հետ՝ ձգտում են ոգտագործել զանազան բուրժուական խավերի արտահայտիչ կուսակցութիւնների հնամաշ դրոշակները և խուճապած նշանաբանները: Սակայն այդ նշանաբաններն ու դրոշակները մեծապես վարկաբեկված և խլամի յեն վերածված մեր յերկրում: Յեւ ինչնց այդ պատճառով ել բուրժուազիան չի սահմանափակվում միայն դրանով, այլ, վորպեսզի իրական լինի իր ազդեցութեան տարածումն ու խորացումը, դիմում ե մի շարք ուրիշ միջոցների, վորոնք ներկված են «խորհրդային» յուլյներով—սմենովեխականութեան, «կենդանի» կամ «նոր» յեկեղեցուն, յերիտասարդութեան հակահասարակական և «ապաքաղաքական» կազմակերպութիւններին, և վերջապես նա ձգտում ե ոգտագործել բանվոր դասակարգի և նրա կուսակցութեան առանձին ջոկատների մեջ առաջ չեկող իդեոլոգիական տատանումները և դեգերումները:

Մանր բուրժուական տարրերի մշտական ճնշման և դասակարգային պայքարի սրվելու պայմաններում բանվոր դասակարգի և նրա կուսակցութեան առանձին միջնաշերտերում ծագում են վոչ պրոլետարական իդ-ձերն ու ձգտումներն արտահայտող տրամադրութիւններ:

Իդեոլոգիական խորթ ազդեցութիւններէ բարդ ցանցի արդեւոյնքն եւ ըստ ելութեան srngկիզմը: Դա քայքայված մանր-բուրժուազիայի հուսահատութեան մտայնութիւնն է: Մանր-բուրժուազիայի այն մասը, վոր իմպերիալիստական պատերազմի շնորհիվ ընկել եր մահացու վիճակի մեջ և տարվել եր Հոկտեմբերեան հեղափոխութեան լոգոնգներով, հետագայում, յերբ տեսնում ե սոցիալիզմի կառուցման մեծ դժվարութիւնները, հիասթափվում ե և հուսահատվում, կորցնում ե իր հավատը վոչ միայն դեպի պրոլետարիատի իշխանութեան ակնթարթային փրկարար հրաշագործութիւնն իր նկատմամբ, այլև դեպի սոցիալիզմի կառուցման հնարավորութիւններն ընդհանրապես: Նրա տատանվող ու յերերվող, անհամբեր ու տնկայուն հոգեբանութիւնն ստեղծագործում ե ավանտյուրիզմի իդեոլոգիա՝ զարգարված ձախակողմեան ֆրազեոլոգիայով: Տրոցկիզմի ելութեւնը հենց այդ իդեոլոգիան է: Նա տանում ե բանվոր դասակարգի ավանգարդը դեպի մեկուսացումը պրոլետարիատի զանգվածից, ինչպես և դեպի պրոլետարական զանգվածների մեկուսացումը գլուղացիութեան հիմնական մասից՝ միջակութիւնից: Այդպիսով տրոցկիզմը վոչ միայն պրոլետարական ավանգարդի մեկուսացման, այլև Հոկտեմբերեան հեղափոխութեան ուժերի պառակտման իդեոլոգիա յէ: Զարմանալու չե, ուրեմն, վոր տրոցկիզմն իր տրամաբանական զարգացմամբ պիտի գնար ու հասներ մինչև հակահեղափոխական տիզմը. զարմանալու չե, վոր նա որչեկտիվորեն ներկայանում ե վորպես բուրժուազիայի ագենտը:

Իդեոլոգիական նույն ազդեցութիւններէ յերկրորդ արդեւոյնքն ե վերջերս կուսակցութեան մեջ վորոշակի կերպով արտահայտված ազ քեֆուր, վոր մեր կուսակցութեան մեջ չեղած առավելապես անկայուն և խորթ ազդեցութիւններին յենթարկվող տարրերի մտորումների ձեակերպումն է: Մեր ընդարձակ շինարարութեան ճանապարհի խոչընդոտներն ու դժվարութիւնները հաղթահարելու համար՝ ըստ այդ մտորումների՝ տակալին անհրաժեշտ են գիշումներ կապիտալիստական տարրերին: Հետեապես մեր ժողովրդական տնտեսութիւնը պետք ե ղեկավարել այնպես, վոր նրա սոցիալիստական և կապիտալիստական սեկտորների միջև առաջ չգա հակառակութիւն, այլ ինի հաշտ ու խաղաղ կենակցութիւն: Գլուղի (իմա գլուղի վերնաշերտերի) հանդեպ անվերջ գիշումներ անելու թեորիա քարոզելով, հանդես գալով գլուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսութիւնների և խորհրտնտեսութիւնների զարգացման և չքավորութեան կազմակերպման դեմ, կախվելով սոցիալիզմի մեջ խաղաղ ճանապարհով ներածելու մտքից, ժխտելով կամ նվազեցնելով կուլակային վտանգը, միևնույն ժամանակ ճգնելով յետ քաշել կուսակցութիւնը յերկրի ինդուստրիացման վերաբերմամբ 15-րդ համագումարի կողմից սահմանած գծից, նվազեցնել այդ ինդուստրիացման տեմպը, փոխադրել ծանրութեան կենտրոնը ծանրից դեպի թեթև ինդուստրիան, «փոքր ինչ» թուլացնել արտաքին առևտրի մենաշնորհը, աջ տարրերն այսպիսով կուլակային-հեպմանական տրամադրութիւնների անուղղակի՝ հաղորդիչներն են հանդիսանում:

Թեև աջ թեքումը չի ձևակերպված և չի կազմակերպված վորպես ֆրակցիա, բայց և այնպես անհանդուրժելի չենրա գոյությունը մեր շարքերում: Անհանդուրժելի չե կուսակցության համար վոչ միայն ինքը՝ այդ թեքումը, այլև այն մտայնությունը, վորը հանդուրժելի չե համարում դա: Այդպիսի հաշտվողական, համաձայնողական վերաբերմունք ուրիշ վոչ այլ ինչ ե, բայց չեթե թերագնահատումն այն վտանգի, վոր առաջանում ե բուրժուազիայի և մանր բուրժուազիայի ազդեցությունից բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ մեր կուսակցության առանձին ողակների վրա: Հաշտվողական մտայնությունը մանր բուրժուական շփերթության և անվճռականության արդյունք ե: Նա ջուր ե ածուս բուրժուազիայի ջրաղացի վրա և զինաթափ ե անում պրոլետարիատին դասակարգային թշնամու հանդեպ:

Բուրժուական իդեոլոգիաներն իրենց բոլոր բազմապիսի ձևերով հաղթահարելու համար անհրաժեշտ ե պայքարել հանուն պրոլետարական իդեոլոգիայի հաստիկության: Պրոլետարական իդեոլոգիան վոչ չերանգներ ունի և վոչ ել գունավորումներ: Նա մեկ ե յեվ միասնական: Կուսակցությունը թույլ չի տա իր շարքերի մեջ բուրժուական «մտքերի ազատություն» մտցնելու վորեւ ճիգ ու ջանք: Միայն բայթեվիկական անհասկությունը կարող ե ցրել իդեոլոգիական այն մեծուք, վոր սեղծում են բուրժուազիան յեվ նրա կամավոր յեվ ակամա գործակիցները:

II

Խորհրդային Հայաստանում, ինչպես և ամբողջ Անդրկովկասում, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ

մղվող պայքարում, բուրժուազիայի հիմնական, ամենատարածված և առավելապես ճկուն իդեոլոգիական զենքը նացիոնալիստական իդեոլոգիան ե:

Նացիոնալիզմն արտահայտվում ե ամենաթարբեր ձևերով, սկսած անսքող, անասնական շովինիզմից մինչև ամենանուրբ, հմտորեն վարազուրված նացիոնալիստական տենդենցները, վորոնք հաճախ քողարկված են լինում նույնիսկ սոցիալիստական ֆրազեոլոգիայով: Սակայն անկախ նրա զանազան արտահայտություններից, նացիոնալիզմը միշտ մնում ե վորպես նույն ռեակցիոն, բուրժուական իդեոլոգիան:

Նացիոնալիզմի արմատները մեկ են ամեն տեղ. նա կոչված ե իդեոլոգիապես զարդարելու և քողարկելու կապիտալիստական բուրժուազիայի անզուսպ ձրգտումը՝ իր շուկաներն ընդարձակելու և բանվոր դասակարգի սանձարձակ շահագործման կաշուն պայմաններ ստեղծելու: Բուրժուազիան իր այդ դասակարգային տնտեսական և քաղաքական նպատակներն իրագործելու համար մորիլիզացիայի չե յենթարկում իր ամբողջ իդեոլոգիական արսենալը, հորինվում են ազգասիրության և «ընտրյալ ազգի» թեորիաներ, բուրժուական պատմաբաններն սկսում են կեղծել պատմությունը, մամուլն ու գրականությունը, դպրոցն ու չեկեղեցին ստեղծում են «հայրենասիրական» առասպելներ: Այսպիսով նացիոնալիզմը վտանգավոր ե նրանով, վոր բուրժուազիան աշխատում ե պատվաստել այն աշխատավոր մասսաներին՝ տնայնագործներին և արհեստավորներին, գյուղացիներին և բանվոր դասակարգի հետամնաց խավերին, իրեն չենթարկել նրանց իդեոլոգիաբար և քաղաքականորեն, պաշտպան կանգնեց-

նել նրանց «համազգային», իրականում՝ բուրժուազիայի դասակարգային շահերին:

Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում ևս բուրժուազիան ուժեղացավ և բոլոր հնարավորություններին, թափանցում և ամեն մի ծակ ու ծոկ, հերկելով մեր հասարակության աչքը շերտերը, վորոնք հարմար են նացիոնալիստական տրամադրություններ սերմանելու համար:

Յեւ այդպիսի շերտեր կան, թեև տապալելով բուրժուազիայի իշխանությունը, մենք նացիոնալիզմին ջախջախիչ հարված տվինք, նրա վերացման պայմաններն ստեղծեցինք և զգալիորեն հաղթահարեցինք նացիոնալիստական տրամադրությունները, ապահովելու այլ և այլ ազգություն աշխատավորների խաղաղ համագործակցությունը:

Ազգային ճնշումը, ազգային պառակտումը և ազգամիջյան կոիմները, բուրժուական կոնսակցությունների քաղաքականությունը, նացիոնալիստական մամուլը և գրականությունը տասնյակ տարիների ընթացքում թունավորում էին աշխատավոր մասնաճյուղերի լայն խավերը շովինիզմի թունով: Այդ հանգամանքը, և մյուս կողմից, դասակարգային պայքարի սրումն այնպիսի պայմաններում, յերբ, մի շարք որբեկտիվ պատճառներով, ազգային հարաբերությունները մեղանում դեռ բավականին բարդ են, աշխուժացնում են նացիոնալիզմը, ուժեղացնում են նացիոնալիստական տրամադրությունների վերարտադրումը: Շահագործելով այդ պարագան, բուրժուազիան աշխատում է մեր ինտերնացիոնալիստական քաղաքականությունը թե տնտեսական և թե կուլտուրական շինարարություն

ասպարիզում հակադրել իր բուրժուական, նացիոնալիստական դիժը: Միաժամանակ նա աշխատում է լիերի սոցիալիստական վերակառուցման ճանապարհին մասնավոր կապիտալիստին և կուլակին մեր հասցրած հարվածների ամբողջ սխառեմը ներկայացնել վարպետ «ազգային ճնշում» մյուս ազգությունների կողմից:

Նացիոնալիզմի բոլոր արտահայտությունների դեմ անողոր քայքայող մղելու անհրաժեշտությունը լենինիզմում և ինտերնացիոնալիստական պարզ և հստակ գիրքավորում:

Պրոլետարիատի ազգային քաղաքականությունը կատարյալ հակադրություն է բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականության: Պրոլետարիատը պաշտպանում է ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, չեղարկում հանդիսանում են համաշխարհային հեղափոխության Փրոլետարի մի մասը, ուղղակի կամ կողմնակի կերպով ուղղված են իմպերիալիզմի դեմ. սակայն այստեղ ել պրոլետարիատը կատարել կռիվ է մղում նացիոնալիզմի՝ վորպես ռեակցիոն մի իդեոլոգիայի դեմ, ազատելով նրա ազդեցությունից իրեն և աշխատավորների այլ խավերին:

Յեթե պրոլետարիատը պաշտպանում և զարգացնում է ազգային կուլտուրան, ապա միայն այն չափով, վոր այդ կուլտուրան՝ լինելով ձևով ազգային, իր բովանդակությամբ ինտերնացիոնալ բնույթ ունի, այսինքն՝ այն չափով, ինչ չափով վոր նա աշխատավոր մասնաճյուղերի կուլտուրան է, սպասարկում է նրանց կարիքները: Պրոլետարիատը վերցնում է հին բուրժուական կուլտուրայից այն, ինչ վոր կարելի է

ծառայեցնել պրոլետարիատի ինտերնացիոնալ դասակարգային խնդիրներին և, պահպանելով նրա ազգային ձևերը, — քանի վոր ազգային այն առանձնահատկությունները, վորոնք կազմված են տարբեր ազգությունների լեզվից, կենցաղային և կուլտուրական ձևերից, պատմական փաստ են հանդիսանում. — կառուցում է իր դասակարգային կուլտուրան, վորի մեջ բուրժուական, նացիոնալիստական վոչինչ չկա:

Պրոլետարիատի ազգային քաղաքականությունը նրա դասակարգային քաղաքականություն արտահայտությունն է, բուրժուազիայի դեմ ուղղված դասակարգային պայքարի հատուկ ձևը: Մինչդեռ նացիոնալիզմը մի գենք է բուրժուազիայի ձեռքին՝ պրոլետարիատի և նրա իշխանության դեմ մղվող պայքարում:

Նացիոնալիստական սրամաղբությունների ամենաչնչին արահայտությունն անգամ բուրժուական, հակահեղափոխական սրամաղբությունների արահայտությունն է:

Սակայն նացիոնալիզմն ընդունում է այնքան բազմազան, քողարկված, գաղտնի ձևեր, վոր հաճախ հնարավորություն է ստանում թափանցել այնպիսի ասպարեզներ և խավեր, վորտեղ ամենից քիչ սպասելի չեն: Աննկատելի կերպով նա թափանցում է մեր մամուլի եջերը, մեր գրականության ասպարեզը, կուլտուրական-դաստիարակչական հիմնարկները և այլն, իդեոլոգիաբար քայքայելով մեր խորհրդային և տնտեսական ապարատի մասնիկները, մեր գյուղացիության և պրոլետարիատի առանձին խավերը և նույնիսկ մեր կուսակցական կազմակերպությունների վորոշ շերտերը:

Այդ պատճառով նացիոնալիզմի արահայտության

զանազան ձևերի ուսումնասիրությունը նախադրյալ է նանդիստանում մեր կուսակցության հիշ ղիրավորումն՝ իդեոլոգիական ֆրոնտի պայքարում:

III

Ռազմատենչ նացիոնալիզմն ամենացայտուն կերպով արտահայտվում է **զաբնակիզմով**: Այդ իդեոլոգիան իր մեջ մարմնացող կուսակցությունը՝ **զաբնակների կուսակցությունը՝ հայ բուրժուազիայի կուսակցությունը** է, հայ իրականության հակահեղափոխական կուսակցություններից ամենաազդեցիկն ու ամենավաճառվորը: Այդ պատճառով էլ դաշնակիզմի ճիշտ գնահատումն ու վորակումը բացառիկ կարևորություն ունի մեր կուսակցության անսխալ որիննտացիայի համար:

Դաշնակցությունը պատմական ասպարեզ է իջել վորպես տաճկական Հայաստանի «անկախության մարտիկ», վորպես Տաճկաստանի հայ զարգացող բուրժուազիայի դժգոհության արտահայտիչն ընդդեմ տաճկական կես-ավատական կապանքների, վորպես Անդրըկովկասի հայ առևտրական բուրժուազիայի՝ ուսն արդյունազորական կապիտալի այդ հնազանդ գործակատարի — Տաճկահայաստանի խոշոր հնարավորություններով հարուստ շուկաներին տնտեսապես տիրանալու անդուսպ ցանկության իրագործման պայքարի ղեկավար: Հայ ընդարձակ դաշնիվածների քաղաքական, իրավական և տնտեսական գրությունը թե Տաճկաստանում և թե Անդրըկովկասում հնարավորություն էր տալիս այդ կուսակցությանը «համազգային» և «համաժողովրդական» մորթով խաբեբայաբար ծածկել իր

դասակարգային բնույթը: Տասնյակ տարիների ընթացքում հայ բուրժուազիայի նպատակների համար հայ ժողովրդի զանգվածները թնդանոթի միա դարձընող Դաշնակցությունն ինքը մի խաղալիք էր իմպերիալիստների ձեռքին: Առավել պարզորոշությամբ, քան յերբեկեցե, համաշխարհային պատերազմը հրապարակ հանեց մի կողմից ռուսական, իսկ մյուս կողմից՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի ղեկավարող ձեռքը Դաշնակցության գործունեության նկատմամբ:

Մեր կուսակցությունը միշտ պայքարել է դաշնակիզմի դեմ վոչ միայն վորպես ռեակցիոն ազգայնական իդեոլոգիայի, այլև այդ իդեոլոգիան կրող կուսակցություն և սրա քաղաքականությունը դեմ, և այդ վոչ միայն այն պատճառով, վոր այդ կուսակցությունը քակում էր հայ և թյուրք զանգվածների կապերը, մեկուսացնում էր հայ ժողովրդի ազատագրական շարժումը, բաժանում այդ շարժումը թյուրք ժողովրդի հեղափոխական կուլից և այն հակադրում վերջինիս, այլև այն հիմնական պատճառով, վոր դաշնակները հայ բուրժուազիայի իդձերը կենսագործելու համար իրենց քաղաքականությունը յենթարկում էին յեվրոպական իմպերիալիստների շահերին՝ առանց վորեկ խորություն դնելու միջոցների միջև, դառնում նրանց կամակատարը՝ հայկական հարցն իմպերիալիստական խավերի հակահեղափոխական գործիք դարձնելու և միշտ գործիք պահելու խնդրում:

Դաշնակներն Անդրկովկասում կազմակերպված բանվորական շարժման հենց առաջին օրից անխնա կռիվ էին մղում՝ հայ բանվորներին այդ շարժմանը

մասնակից անելու դեմ: Նրանք պայքարում էին նրանց դեմ, վորոնք հորդորում էին հայ բանվորությունը՝ տոգորվել դասակարգային կուլի անհաշտությունը, և ընդհակառակը, տիրացուական քարոզ խոսում դասակարգային խաղաղություն, դասակարգային հաշտության մասին: Նրանք պայքարում էին նրանց դեմ, վորոնք կոչ էին անում հայ բանվորությունը՝ մտնել բանվորական կուսակցության հեղափոխական դրոշի տակ ընդդեմ ցարական բռնակալության և ընդհակառակը, քարոզում քաղաքական լուծյան և ընդհակառակը, վորպեսզի կարելի լինի անտարբերություն «այստեղ», վորպեսզի կարելի լինի ռուս ցարի և ռուս կադետական բուրժուազիայի վորոշորմությունը հայցել «անդիլի», այսպես կոչված՝ ազդեցիկ-ազատագրական շարժման նկատմամբ: Վորքան ավելի չեք ընդարձակվում և խորանում բանվորական դասակարգային-հեղափոխական շարժումն Անդրկովկասում, այնքան ավելի էին դաշնակներն ուժեղացնում իրենց կռիվը հայ բանվորության մասնակցության դեմ՝ այդ շարժմանը, այնքան ավելի և այնքան մեծ յեռանդով էին նրանք պաշտպանում հայ կապիտալի շահերն ու դիրքերը, և վորքան ավելի չեք խորանում դասակարգային անտագոնիզմը, այնքան ավելի չեք հայ բուրժուազիան գնում ռուսական ցարի և վելի չեք հայ բուրժուազիան գնում ռուսական ցարի և իմպերիալիզմի դիրքը՝ իր հետ տանելով իր հավատարիմ գամիտին՝ Դաշնակցությունը: Վերջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում դաշնակները դարձել էին իսկական ռուս սև-հարյուրակայիններ վորպեսզի պրոլետարական հեղափոխության սուր ժամանակաշրջանում դառնան ռուս կապիտալի և միջազգային իմպերիալիզմի ամենակատաղի ագենտներն Անդրկովկասում:

Պատերազմը և հեղափոխությունն ամբողջապես մերկացրին Դաշնակցության վողջ ելույթունը: Հայ կապիտալի «հոգեկան ապրումները» գտնում էին իրենց ամենանուրբ արտահայտությունը Դաշնակցության մեջ: Յեթե դաշնակները դեմ էին Անդրկովկասի անջատմանը Ռուսաստանից, ապա դա հայ կապիտալի սերտ կապի թելադրանքն էր ռուս կապիտալի հետ: Յեթե դաշնակներն «արցունք էին թափում» Անդրկովկասի անդամահատության առիթով, ապա դա հայ կապիտալի սարսափի հետևանքն էր, սարսափի, վոր առաջ էր չեկել Անդրկովկասի տնտեսական կյանքում իր բռնած բարձունքների խորտակման հեռանկարից: Դաշնակները միշտ «հակասական» վերաբերմունք են ունեցել դեպի ռուսական Հայաստանի խնդիրը: Դա իրապես յերկրորդական խնդիր էր նրանց համար: Տնտեսապես հետամնաց, տնտեսապես անզրավիչ ռուսական Հայաստանը միայն քաղաքական արժեք ուներ նրանց աչքում, վորպես քաղաքական բազա ռուս կապիտալի առաջխաղացության ծարավը հագեցնելու ստոր ծառայականությունն ստանձնած հայ կապիտալի քաղաքական ու տնտեսական եքսպանսիայի համար՝ դեպի հարավ:

Ռուսական իմպերիալիզմի շահերը զուգորդվում էին հայ բուրժուազիայի շահերին, ավելի ճիշտ՝ հայ բուրժուազիայի շահերը յենթարկվում էին իմպերիալիզմի շահերին: Թե ռուսական հակահեղափոխության և թե Անտանտայի իմպերիալիզմի համար դաշնակների «Արարատյան հանրապետությունը» ուրիշ վոչինչ չէր, բայց յեթե վորեւ ինքնուրույն նշանակությունից զուրկ, քաղաքական մի գաղութ, վոր ծառայում էր

վորպես հենակետ այս կամ այն իմպերիալիստական նպատակների համար:

Դաշնակները գործադրել են միշտ քաղաքական պայքարի բազմազան մեթոդներ, սկսած 2-րդ Ինտերնացիոնալի և սրա դրոշակի ոգտագործումից մինչև ռեակցիոն չեկեղեցու հետ սեթևեթումը և միջնադարյան խժբապետական սխտեմի պատվաստումը, մեթոդներ, վորոնք վկայում են վոչ թե դաշնակցական իդեոլոգիայի յերբուրեւ ու անհաստատ վիճակը, այլ այն, վոր նրանք ունեն հաստատուն քաղաքական գիծ, մի գիծ, վոր բղխում էր իմպերիալիզմին սպասարկող հայ բուրժուազիայի շահերից: Այդ բազմազան մեթոդների նպատակն էր՝ ըստ հնարավորին՝ լայն զանգվածներ գրավել Դաշնակցության ազդեցության տակ: Յեւ իրոք, Դաշնակցության մեջ և նրա ազդեցության տակ էյին գտնվում մանր-բուրժուազիայի հսկայական շրկատներ: Այդ տարրերի շնորհիվ հաճախ խլրտումներ էին տեղի ունենում կուսակցության մեջ, սակայն միշտ հաղթողը հանդիսանում էին խոշոր բուրժուազիայի իդեոլոգները, վորոնք յերբեմն գիջումներ անելով նրանց ֆրադեոլոգիայի մասում, շարունակում էին մնալ կուսակցության դեկի մոտ:

Դաշնակցության ընթացիկ քաղաքական գիծն ավելի յե վորոշ ու ամուր՝ անկախ նրա սովորական ֆրազաբանությունից: Այդ բնորոշվում է և պայմանավորվում հայ բուրժուազիայի համար ստեղծված դրութչամբ Անդրկովկասում: Պրոլետարական հեղափոխությունը մահացու հարված է հասցրել նրա տնտեսական ուժին: Այդ պատճառով ել առավել մեծ է դարձել դաշնակների կախումն իմպերիալիզմից: Այդ-

6965-57



տեղից ել բղխում են Դաշնակցության նպատակներն ու անելիքները այսօր—կռվել պրոլետարիատի ղեկաւարտութեան դեմ, սպասարկել իմպերիալիզմին և մուրալ «մեծ» Հայաստան: Այդ վերջին «պահանջով» դաշնակները ձգտում են թող փչել մամուլը աշխարհը ցրված ու փոշիացած հայ աշխատավոր զանգվածների աչքին, վորպեսզի գաղտնի պահեն իրենց կատաղի կռվի ճշմարիտ նպատակը—վերականգնել հայ բուրժուազիայի իշխանութիւնը և Խորհրդային Հայաստանը դարձնել ռազմական ավանտուրաների հեղինակաւ՝ ոտար իմպերիալիստների համար: Այդ իրականացնելու համար նրանք ջանք են թափում հենվել կապիտալիզմի ծիլերի՝ կուլակների ու նեպոմանների վրա: Յեւ վորքան ավելի յե խորանում սոցիալիստական հարձակումը քաղաքում և գյուղում, վորքան ավելի յե սրվում դասակարգային կռիվը, վորքան ավելի յեն սահմանափակվում կապիտալիստական տարրերն ու տնտեսական աճումից հուսադուրկ լինում, այնքան ավելի սերտորեն են համախմբվում այդ տարրերը դաշնակիզմի շուրջը: Պատրաստվելով խորհրդեղների դեմ գինված պաշարի, չերբ իմպերիալիստական պետութիւնները պատերազմ սկսեն ԽՍՀՄ դեմ, ձգտելով առաջիմ «պաշտպանիլ հայ ժողովրդի Ֆիզիկական գոյութիւնը», վորպեսզի հետադաշում գոհաբերեն նույն այդ ժողովրդին, յերբ դա հաճելի լինի իմպերիալիստներին, դաշնակներն իրենց արտասահմանյան մամուլի եջերում խորհրդային իշխանութիւնը գինված տապալելու փորձերից ձեռնապահ մնալու մասին են խոսում՝ նկատի ունենալով «թշուրքական վտանգը»: Այս «խաղաղա-

տիրական քաղաքականութեան» դրոշակի տակ նրանք նեպոմանային-կուլակային տարրերին հրահրում են պրոլետարիատի տնտեսական և քաղաքական ձեռնարկումները դեմ թե մարդկայես և թե առանձին-առանձին վերցրած (հարկային քաղաքականութիւն, ազգային քաղաքականութիւն, վերաբերմունք դեպի յեկեղեցին և այլն): Այդպիսով, ընդարձակ զանգվածներին խաբելու համար մի շարք անցման նշանաբաններ առաջադրելով՝ նրանք անշեղ գնում են դեպի իրենց հիմնական նպատակը—աշխատավորութեան արջան մեջ խեղդել պրոլետարիատի ղեկաւարտութեան և հաստատել բուրժուազիայի ղեկաւարտութեան:

Այդպիսով՝ Դաշնակցութիւնը չեղել է և է հայ բուրժուազիայի իզմերի ու ձգտումների արտահայտիչն ու մարտական կուսակցութիւնը: Նա կատարել է և կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասաւորելու ամենաստոր պաշտոնը: Դաշնակիզմը բուրժուական-ազգայնական-շովինիստական հեղահափոխական իդեոլոգիա չէ: Նա հայ իրականութեան Ֆաշիզմն է: Յեւ հենց այդ իրականութեան մեջ Դաշնակցութիւնն ամենահակահափոխական ուժն է, խորհրդային իշխանութեան ու մեր յերկրի աշխատավորութեան առավելագույն վտանգավոր թշնամին, վոր միջազգային իմպերիալիստների վոսկիներով կաշառված ու զենքերով սպառազինված՝ պատրաստ է իր իմպերիալիստական տերրի առաջին իսկ հրամանով հարձակվել ԽՍՀՄ և Խորհրդը: Հայաստանի վրա: Յեւ ինչպես վոր բոլոր թշնամական իդեոլոգիաներից ամենավտանգավորը համապարփակ նացիոնալիզմն է, տոնպիս ել այդ նացիոնալիզմի ամենահետևողական արտահայտիչը՝ Դաշ-

նակցությունը՝ հակահեղափոխական ճակատի հեղեմունն ե ու ղեկավարը:

IV

Բացի դաշնակիցներից, մեր իրականության մեջ գոյություն ունեն նաև ուրիշ թշնամական նացիոնալիստական իդեոլոգիաներ, վորոնք ավելի կամ նվազ չափով են արտահայտվում: Զխոսելով արտասահմանյան հալ բուրժուազիայի կուսակցության՝ ռամկավարների մասին, հիմնական թշնամական իդեոլոգիաներն սպառվում են հետևյալ մտայնություններով — հնչակիզմ, սմենովեխականություն, մենշևիզմ, սպեցիֆիզմ և տրոցկիզմ:

Վորքան ել անախրոնիստական մտայնություն լինի հնչակիզմը, վորքան ել նա մարած լինի մեզ մոտ, այնուամենայնիվ հալ գաղութներում նա դեռ գոյություն ունի: Այդ մտայնությունը նույն դաշնակիզմն է, միայն ավելի թույլ և անգույն, ավելի վախկոտ, չերերվող ու քառասային:

Ինչպես Խորհրդային Միության մեջ ընդհանրապես, այնպես ել մեր չերկրում սմենովեխականությունը պաշտպանողական լողուններով վարագուրված բուրժուական իդեոլոգիա չէ, վոր ձգտում է հարմարվել նոր պայմաններին և մասսաների վրա ազդելու նպատակով գործադրել նոր մեթոդներ: Նա ամբողջովին թափանցվել է նացիոնալիստական տրամադրություններով և ձևավորում է խորհրդային կարգերին հարմարված բուրժուական տարրերի և բուր-

ժուական ինտելլիգենցիայի վերնախավերի իդեոլոգիա ու տրամադրությունները: Այդ տրամադրություններն արտահայտվում են մեզ մոտ կամ ազատական սմենովեխականություն, կամ դաճնակցական սմենովեխականություն, կամ ել յեկեղեցական սմենովեխականություն: Անկախ իր տեսակետներից, սմենովեխականությունը մեր դասակարգային թշնամու ձեռքին նկատելի զենքերից մեկն է այն պայքարում, վոր մղում է նա՝ դասակարգային թշնամին մեր չերկրի մանր-բուրժուական մասսաների վրա ազդեցություն ձեռք բերելու համար: Յեթե առաջինի հարմարվելու խողովակը ուսական որիենտացիան է, ապա չերկրորդինը վոչ միայն դա չէ, այլ և դեպի «մայր» Դաշնակցությունն ունեցած վերաբերմունքը, վոր արտահայտվում է կամ բացասական լիկվիդատորություն, կամ ել դրական հաշտեցություն: Իսկ յեկեղեցական սմենովեխականության հարմարվելու խողովակը յեկեղեցական ռեֆորմներն են:

Սպեցիֆիզմը դաշնակիզմի և մենշևիզմի խառնուրդն է: Սպեցիֆիզմը նույն դաշնակիզմն է, միայն «բանվորական» իդեոլոգիայով ծածկված: Դաշնակիզմի ելականը նացիոնալիզմն է, իսկ մենշևիզմի ելականը՝ ռադիկալիզմը: Հետևապես սպեցիֆիզմի ելականը նացիոնալիզմն է ու ռադիկալիզմը հավասարապես:

Սակայն սպեցիֆիկչան իդեոլոգիայի մեջ նացիոնալիզմն այն չէ, ինչ դաշնակցական նացիոնալիզմը: Վորքան վերջինս շեղված է, գոհհիկ, անասնական, այնքան սպեցիֆիկչան նացիոնալիզմը քողարկված է, նուրբ, «կուլտուրական»: Սպեցիֆիզմը վոչ թե բացարձակ թշնամության քարոզ է մշուս ազգու-

թշուհներին նկատմամբ, այլ ազդու թշուհներին ինքնամ-
փոփման, մեկուսացման քարոզ:

Մենեմլիզմը Հայաստանում լերքեք չի ունեցել
քիչ թե շատ աչքի ընկնող ազդեցութիւն: Սակայն
վերջին տարիներս նա փորձում է ակտիվութիւն
զարգացնել առավելապէս մանր-բուրժուազիայի վեր-
նախավերում և մանր բուրժուական ինտելլիգենցիայի
շարքերում: Նա հույս ունի վորոշ հաջողութիւն ձեռք
բերել աչն հիման վրա, վոր դաշնակիզմի իդեոլոգիան
վերջին ութը տարվա ընթացքում վարկաբեկվել է, և
խորհրդային ինտելլիգենցիայի ու մանր բուրժուազի-
այի վորոշ տարրերն իդեոլոգիական սիւսեմի «ալիքի»
բարձր վորակ» են պահանջում: Սպասարկելով մանր
բուրժուազիային և մանր բուրժուական ինտելլիգենցի-
ային, մենշևիզմն անխուսափելիորեն համակվում է
նացիոնալիզմով, ընդունում է «սպեցիֆիկ» ձևեր և
զարգանում է դեպի դաշնակիզմը:

Տրոցկիզմը խորհրդային Հայաստանում, աչնպէս,
ինչպէս և խորհրդային Միութեան այլ մասերում, վեր-
ջին հաշվով արտահայտում է սնանկացող և քայքայ-
վող մանր-բուրժուազիայի հուսահատութիւնը: Մե-
զանում նա գլխավորապէս հենվում է ապագառակար-
գայնացած ինտելլիգենցիայի ու մանր սեփականատի-
րական հոգեբանութեան գերի մնացած՝ քաղաքակա-
նապէս հետամնաց բանվորների վրա, վորոնց սոցիա-
լիզմի շինարարութեան դժվարութիւնները թվում են
անհաղթելի: Տրոցկիզմն աչդպիսով, դարձած լինելով
հակախորհրդային և հակահեղափոխական իդեոլոգիա,

անխուսափելիորեն թափանցվում է նացիոնալիզմով և
վերջիվերջո պիտի մոտենա, մինչև իսկ ձուլվի Դաշ-
նակցութեան հետ:

Կ

Նացիոնալիզմի իդեոլոգիան մանր բուրժուական
շրջապատի և դասակարգային թշնամու աշխուժութեան
պայմաններում մասամբ թափանցել է նաև մեր կու-
սակցութեան շարքերը, առաջ բերելով նրանում ուղիւ-
նիստական տրամադրութիւններ և սպեցիֆիզմի ունցի-
դիֆներ: Հայաստանի կոմկուսի նախկին ղեկավարու-
թիւնը վորոշ տուրք եր տալիս թշնամի դասակարգերի
կողմից ներշնչված աչդ տրամադրութիւններին, վո-
րոնք արտահայտվում են յին մի շարք խոշոր սկզբուն-
քային-քաղաքական սխալներով և սալթաբուհներով
տնտեսական և իդեոլոգիական աշխատանքների բնա-
գավառում: Կուսակցութեան նախկին ղեկավարութեան
սկզբունքային քաղաքական սխալներն արտահայտում
են յին աչդ ղեկավարութեան աշխատանքների բնա-
թեքումը: Այս հանգամանքը մի ալելիորդ անգամ ցույց
է տալիս, վոր մեր պայմաններում աշ տրամադրութ-
թիւններն ընդհանրապէս միանալով նացիոնալիս-
տական տրամադրութիւնների հետ, շատ հաճախ նա-
ցիոնալիստական-ուղիւնիստական կերպարանք են
ստանում:

Սխալ կլինի կարծել, թե կուսակցութեան
փոփոխմամբ աշ և նացիոնալիստական, մանավանդ քո-
ղարկված նացիոնալիստական, տրամադրութիւնները
կուսակցութեան շարքերում վերացված են վերջնակա-

նապես և ամբողջովին: Այ-տրամադրութիւնների, և առհասարակ թշնամի իդեոլոգիաների խորթ ազդեցութիւններն դեմ մղվող պայքարը պահանջում է հսկայական ջանք և յերկարատե, համառ աշխատանք: Յեւ մեր կուսակցութիւնը ամենեւին չզերազնահատելով թշնամու ուժը, յերեք չժողանալով, վոր մեր իդեոլոգիական և քաղաքական դիրքերն անհամեմատ ավելի ուժեղ են, քան 8 տարի սրանից առաջ, իսկ թշնամու դիրքերն՝ անհամեմատ ավելի թուլ, պետք է ուշի-ուշով և աչալուրջ հետևի պրոլետարիատին խորթ տրամադրութիւններն ամենափոքր արտահայտութիւններին, կազմակերպելով վճռական հարձակում նրանց դեմ, կազմակերպելով համատարած արշավանք իդեոլոգիայի ֆրոնտում, համախմբելով մասսաներին իսկական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ:

ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

I

1. Յեթե ագիտացիայի, պրոպագանդի և կուլտուրական շինարարութեան հարցերը մեր կուսակցութիւնը միշտ առաջադրել է՝ նայած սոցիալիստական շինարարութեան կոնկրետ անելիքներին, յեթե այդ հարցերը միշտ յենթարկվել են մեր կուսակցութեան քաղաքական հիմնական խնդիրներին, ապա հասկանալի չէ, վոր մեր իդեոլոգիական աշխատանքի բովանդակութիւնը, նրա կենտրոնական վորոշիչ ողակը պետք է հանդիսանա խնդիրների այն շրջանակը, վորով պայմանավորվում է կուսակցութեան հիմնական դիժը մեր զարգացման տվյալ ետապում:

2 Դասակարգային պայքարի սրումը իդեոլոգիական ֆրոնտում արտահայտվում է գլխավորապես հետևյալ ձևերով. ա) խորհրդային իշխանութեան ձեռնարկումների դեմ ուղղված դաշնակ-կուլակային անըստի պրոպագանդայով, բ) կրոնական ագիտացիայի աշխուժացմամբ և ուժեղացմամբ, գ) նացիոնալիստական տրամադրութիւններն աշխուժացմամբ մեր կյանքի բոլոր ասպարեզներում:

Ահա թե ինչու իդեոլոգիական լայնածավալ պայքարը, մասնավորապես պայքարն ընդդեմ նացիոնալիզմի, պայքար հանուն մասսաների **ԻՆՏԵՐՆԱԿՈՆԱԼԻՍԱԿԱՆ** դաստիարակութեան առանձնապես կարևոր նշանակութիւն ունի և ավելի մեծ ուշադրութիւն և ուժ է պահանջում մեզանից:

3. Նախ և առաջ մենք պարտավոր ենք հարվածել հայ Նացիոնալիզմը, փակ Հայաստան յերգող Նացիոնալիզմը, վորը խախտում է ԱՍՖԽՀ, ԽՍՀՄ-ի հիմքերը: Մենք պետք է կատարի կոիվ հայտարարենք նրանց, վորոնք՝ քողարկվելով ինտերնացիոնալիստական ֆրազներով՝ մասսաների ուշադրութիւնն ուղղում են աչալ ազգի նացիոնալիզմի կողմը, դրանով իսկ դեղորինտացիայի յեն յենթարկում մասսաներին, սքողում են նացիոնալիզմի դեմ պայքարը յերկրում, որչեկտիվորեն հանդես են գալիս վորպես հաշտողականներ իրենց ժողովրդի նացիոնալիզմի նկատմամբ:

Միմիայն այդ տեսակետին հանգելով կարելի չէ հաջող պայքար մղել թե իր և թե ոտար նացիոնալիզմի դեմ:

4. Նացիոնալիզմի դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միմիայն ագիտացիայի և պրոպագանդի

շրջանակներում, այլ պետք է ընդգրկի հիմնական որ-
չեկտիվ աշխատանքների վերափոխումը և սուբյեկտիվ
սխալների ուղղումը, վորոնք վորոշ հիմք են ծառա-
յում աշխուժացող նացիոնալիզմի համար:

ա) Սոցիալիստական արդյունաբերությունը և
կոոպերացիայի առաջընթաց աճումն ավելի ու ավելի
դուրս մղելով մասնավորին, ստեղծում է գործազուրկ-
ների նոր կադրեր մանր առետրականներից, արհեստա-
վորներից և տնայնագործներից և մեր տնայնագործական
կոոպերացիայի թուլությունը պատճառով ծանր դրու-
թյուն է ստեղծում ընդհանրապես տնայնագործական-
արդյունաբերական գործի համար: Մյուս կողմից, վար-
չական ծախսերի շարունակ իջեցումը և խորհրդային
հիմնարկները վարչական ապարատի կրճատումը, ինչ-
պես նաև պրոֆեսսիոնալ վորոշ թեքում չունեցող մեծ
թվով միջին դպրոցների գոյությունն ստեղծում է
դժգոհ ինտելլիգենցիայի կադրեր: Նացիոնալիզմին ամե-
նից ավելի չենթակա այդ կադրերի հարցը պետք է
ուժվի նախ և առաջ:

Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն նվիրել
տնայնագործությունը: Թեթև արդյունաբերությունը
ապրանքների ներկայիս պակասությունը պայմաններում
վոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ է տնայնա-
գործությունը դարձնել մեր տնտեսության ոժանդակ
ճյուղը, տնտեսական ոգնություն հասցնելով և կոոպե-
րացնելով տնայնագործ-արհեստավորներին:

Գործնական հողի վրա դնել ընդհանրապես գոր-
ծազուրկներին և մասնավորապես ինտելլիգենտ գոր-
ծազուրկներին վերափոխվողներին հարցը:

Բոլոր միջնակարգ դպրոցներում ուժեղացնել
պրոֆեսսիոնալ թեքման սկզբունքը:

բ) Նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի գոր-
ծում մեծ նշանակություն է ստանում պետական ապ-
արատը: Նացիոնալիստական իդեոլոգիան, վորն ան-
տարակույս արտացոլում է մեր պետական ապարա-
տի մի մասում, աշխատողների վորոշ մասի զանցա-
ռությունը արտահայտվում է թե գործնական տնտե-
սական աշխատանքի և թե խորհրդային շինարարու-
թյան հարցերը նացիոնալիստական տեսակետով լու-
սաբանելու փորձով:

Անհրաժեշտ է՝

Ավելի մեծ ուշադրություն նվիրել պետական որ-
դանների կազմին թե նրանց հարադատությունը և թե
ազգային անհրաժեշտ հարաբերությունն ապահովելու
գծով: Վճռական հակահարված տալ, գործ դնելով կազ-
մակերպչական համապատասխան միջոցներ բացահայտ
նացիոնալիստական տարրերի վերաբերմամբ:

Խստորեն անցկացնել պետապարատն ել ավելի
բնիկացնելու գիծը, ըստ ամենայնի ապահովելով մա-
նավանդ ազգային փոքրամասնությունների լեզվական
շահերը:

Հատուկ ուշադրությամբ կանոնավորել Հայաս-
տանի ազգային փոքրամասնությունների այն հարցե-
րը, վորոնք կապված են քոչի, հողի և ջրի խնդիրների
հետ և մանավանդ տարրեր ազգություններով բնակ-
ված գյուղերի գյուղամիջյան վիճելի հարցերը: Այդ
աշխատանքի բնագավառում ել անհրաժեշտ է կիրա-
ռել դասակարգային հստակ գիծ, վոչ մի դեպքում գի-
շում չանելով կուլակային տարրերին, պայքարել
քաղքենիական «ինտերնացիոնալիզմի» դեմ, վորը չի
կամենում ղիպչել ազգային փոքրամասնությունների

կուլակին և նեպոմանին: Այստեղ ել, ինչպես և ամենուրեք, դասակարգային հստակ գիծ անցկացնելը, այն է՝ տնտեսական ուժով ոգնությունը չքավորին, կոլտոնտեսական և ընդհանրապես կոոպերացիայի բոլոր տեսակների շինարարութեան ծավալումը, վճռական պայքարն ընդդէմ կուլակի, մոլլայի, աղանդավորութեան և այլն—մեր գործնական աշխատանքի պարտադիր գիծն է և միաժամանակ մեր լավագույն ղեկըրը նացիոնալիզմի դէմ մղվող պայքարում:

Մասսաների ինտերնացիոնալ դաստիարակութունը չպետք է հասկանալ վորպես սոսկ ագիտացիա հանուն աշխատավորների յեղբայրութեան: Նեղ իմաստով ագիտացիայի բանավոր ու գրավոր պրոպագանդի խնդիրն է՝ վերլուծել նացիոնալիզմի ալլ և այլ տեսակները, յերևան հանել նրանց արմատները, ցույց տալ մասսաներին նրա դասակարգային ելությունը, յերևան հանել և մերկացնել այն սկզբները, վորով նացիոնալիզմը թափանցում է աշխատավորների շարքերը և դրանով իսկ նախազգուշացնել աշխատավորներին, գիտնել նրանց՝ ճանաչելու և հետևապես նացիոնալիզմի դէմ պայքարելու ղեկքով: Սակայն միմիայն դրանով չի սպառվում հարցը. անհրաժեշտ է գործնականում, մեր կյանքի բոլոր բջիջներում նացիոնալիզմին հակադրել մեր իսկական ինտերնացիոնալիզմը:

Յերկրի տնտեսական շինարարութիւնը պետք է ընթանա ԱՍՖԽՀ ամրացման, ամեն տեսակ ազգային դեմոկրատական տրամադրութիւնների դէմ պայքարելու նշանաբանի տակ:

Անդրկովկասյան ֆեդերացիայի ամրացման գա-

ղափարը պետք է դառնա՝ մասսաների ինտերնացիոնալ դաստիարակութեան հիմնական խնդիրը:

Անհրաժեշտ է լուրջ ուղարկութիւն դարձնել եքսկուրսիաների կազմակերպման վրա, հատկապես յերտասարգութեան համար դարձնելով դրանք ավելի սխտեմատիկ և ավելի մասսայական, պարտավորեցնելով եքսկուրսանտներին զեկուցում տալ վերադարձից հետո բանվորական և գյուղացիական ժողովներում:

Պատշաճ բարձրութեան վրա դնել դպրոցներում այն առարկաների դասավանդումը, վորոնց նպատակն է ծանոթացնել աշակերտներին հարեան հանրապետութիւնների կյանքին և նիստուկացին:

Թե՛ գեղարվեստական գրականութեան և թե՛ ուսուցման միջոցով լուսաբանել հարեան հանրապետութիւնների պրոլետարական և ժողովրդական գրողների ստեղծագործութիւնը:

Պարբերական մամուլում և բրոշյուրային մասսայական գրականութեան եջերում ավելի հաճախ և ընդարձակորեն լուսաբանել Անդրկովկասյան Ֆեդերացիայի կուլտուրական և տնտեսական շինարարութեան առանձին բնագավառները:

5. Ագիտացիայի, պրոպագանդի և կուլտուրական շինարարութեան ամբողջ աշխատանքն սկսած գիտական աշխատանքից մինչև ագիտացիայի ամենահասարակ ձևերը, ինչպես, որինակ՝ սպորտային խաղերը, շաքարթորակները, հանդեսները և այլն—պետք է կազմակերպված լինեն աջնալիսի յեղանակով, վոր ապահովվի՝

Մեր բոլոր աշխատանքների միասնականութիւնը

կուսորգանների ագիտարույ բաժինների ընդհանուր ղեկավարութեան տակ, վորքան ել տարբեր լինեն աշխատանքի ձևերը, մեթոդները և ապարարտները:

Սոցիալիստական շինարարութեան հիմնական հերթական խնդիրների ժամանակին ցատուուն արտացոլումը:

II

6. Ակումբները.—Ակումբային մասսայական, ինչպես և կուլտուրական ամբողջ աշխատանքը պետք է դրվի դասակարգային խիստ սկզբունքների վրա: Նա պետք է ոգնի մասսային յուրացնել մեր կուսակցութեան գիծը: Անհրաժեշտ է արմատախիլ անել «անսկզբունք կուլտուրարութեան» ֆրացորդները: Ակումբները, վորոնք իրենց արտաքին գուգազարդմամբ իսկ պետք է մասսաների ինտերնացիոնալ դաստիարակման խոշոր միջոց հանդիսանան, դեռ չեն մոտեցել այդ խնդրին: Վորքան ել նրանք մասսաների դաստիարակման բաղադրանք ձևեր և մեթոդներ ունենան, այնուամենայնիվ շատ յետ են ֆրացել իդեոլոգիական ֆրոնտում յեռանդուն պայքար մղելու խնդիրներին: Կուսակցութունը պետք է ուժեղացնի իր սւշադրութունը դեպի վերին աստիճանի կարևոր այդ բնագավառը: Նույնը պետք է ասել նաև մասսայական ագիտացիայի բոլոր ձևերի վերաբերմամբ:

7. Կիցո.—Հայկիսոն միայն վերջերս, «Տունը հրաբուղիի վրա» նկարով վոտ դրեց իր անմիջական խընդիրների իրագործման ուղին: Սխալ, ֆրասակար և բուրժուական մասնագետներից փոխ առած պետք է հալարել այն տեսակետը, ըստ վորի իդեոլոգիական հա-

րադատ նկարը հակադրվում է այսպես կոչված «յեկամտաբեր» նկարին: Կինոյի ռեպերտուարից ընդմիշտ պետք է դուրս գցվի բուրժուական գոնհկութունը և նպատակ դրվի լուսաբանել անդրկովկասյան աշխատավորների հեղափոխական կյանքի հջերը, տալ մեր ժամանակակից շինարարութունը, վերակառուցման խնդիրներով համակված մեր կյանքը: Միմիայն այդ դեպքում է, վոր կինոն կկարողանա խորհրդային գորեղ ագիտատորի դեր կատարել:

8. Ռադիո.—Ռադիոն արդեն նվաճել է հասարակութեան խոշոր շահագրգռութունը: Աշխատանքի այդ ձևը, վոր ավելի թեթև է, ավելի եժան, քան կինոն, մեր պայմաններում վիթխարի նշանակութուն ունի: Անհրաժեշտ է զարգացնել հասարակական ինքնագործունեութունը՝ ռադիո-բարեկամների աշխատանքն ամրացնելու համար, ընդարձակել ռադիո-հաղորդման ցանցը, ուժեղացնել տեխնիկական հսկողութունը և ամեն կերպ բարելավել հաղորդումը, յենթարկելով վերջինս կուսակցութեան ընթացիկ խնդիրներին:

9. Թատրոն.—Պետական թատրոնն իր հեղափոխական ներկայացումներով վոտ դրեց զարգացման ճիշտ ուղին: Անհրաժեշտ է լայն աշխատանք ծավալել՝ ակումբային և գյուղական բնմը խալտուրայից աղատելու, ակումբներում և գյուղերում հեղափոխական պիեսներ, հեղափոխական բեմադրություններ ստեղծելու, այդ բեմերի համար ավելի բարդ թեմաներ մշակելու և այլն:

10. Ֆերգեր յեվ յերաժեցություն.—Այդ ասպարիզում մենք ամենից ավելի յետ ենք ֆրացել: Այնինչ յերգերը, յերաժշտությունը և պարերը փոքր դեր չեն խա-

դում մասսաների դաստիարակութեան գործում: Գլխա-
քաղութամբը պետք է ամբողջ ծավալով առաջադրի
այդ պրոբլեմը, մասնավորապես պետկոնսերվատորիան
պետք է ընդհուպ մոտենա այդ հարցերի լուծման, ա-
վելի սերտ կապ հաստատի բանվորական և կարմիր-
բանակային ակումբների հետ:

**11. Գեղարվեստական պլակատ՝ Բանգակագոր-
ծությունը յեզ կերպարվեստ.**—Այդ ասպարիզում նույն-
պես շատ քիչ բան է արված: Գեղարվեստական նկա-
րի, հեղափոխական պլակատի մեջ մեր պայքարը, մեր
շինարարությունը դեռ չի արտացոլել: Մեր մասսա-
կական հանդեսները գեղարվեստական ձևավորման ի-
մաստով յետ են մնում Արևմուտքի բուրժուական կար-
նավաճներից. մեր ակումբների զարդարանքները, նրանց
կահավորումը, նկարազարդումը, պլակատները և նը-
կարները—շատ քիչ բացառությամբ—դաստիարակչա-
կան նշանակություն չունեն, չեն ստեղծում մի միջա-
վայր, վորը «փայլուն կերպով վկայեր մեր սոցիալիս-
տական ուղու մասին»: Նույնը պետք է ասել նաև
դպրոցի կահավորման մասին. ավելի վատ է, իհարկե,
խրճիթ-ընթերցարանում:

12. Գեղարվեստական գրականություն.—Գեղար-
վեստական գրականության բնագավառում մենք վո-
րոշ նվաճումներ ունենք: Պրոլետգրողների ասոցիա-
ցիան արդեն դառնում է մասսաների գեղարվեստական
դաստիարակության աղբյուր գործիք: Հիվանդագին լե-
րույթներն այդ կազմակերպության շարքերում հիմ-
նականում բացատրվում են կազմակերպության աճման
ցավերով: Անհրաժեշտ է ամեն կերպ ստեղծագործա-
կան պայմաններ ստեղծել այդ կազմակերպության

մեջ, վերջ տալ գործի կազմակերպչական կողմով չա-
փից դուրս տարվելուն, ասոցիացիայի ուշադրու-
թյունը հրավիրել ստեղծագործության և առանձին
ընկերների սխալների սկզբունքային քննադատության
խնդիրների վրա:

Այ թեքման վտանգը չի կարող չարտացոլալ
գրականության մեջ, ճիշտ աչնպես, ինչպես ժամանա-
կին գրականության մեջ արտացոլաց տրոցկիզմը՝
իդեմս վարդինիզմի: Անհրաժեշտ է անողորմ կռիվ մղել
առանձին ընկերների ստեղծագործության մեջ արտա-
հայտվող նացիոնալիստական տրամադրությունների
դեմ, չձգտելով, սակայն, վարկաբեկելու և կազմակեր-
պությունից անջատելու առանձին ընկերներին:
Ուսման և ներգրավման հարցերն այդ ասպարիզում
շատ ավելի տեղին են, քան վորևե այլ բնագավառում:

Գրողների շրջանում շերտավորումը, ուղեկից-
ների մի մասի աջացումը պրոլետգրողների ասո-
ցիացիայի առջև քաղաքական խնդիր է դնում՝ ըս-
տեղծել գրողների միությունների ֆեդերացիա՝ նվա-
ճելու և մեզ մոտեցնելու համար ուղեկիցների լավա-
գույն մասը:

13. Անգրագիտության վերացումը.—Մեր յերկրի
սոցիալիստական վերակառուցման ամբողջ աշխատան-
քը, թշնամի իդեոլոգիայի, հետաձուցությունից և տգի-
տության դեմ պայքարը կարող է հաջողություն գտնել
միայն աչն դեպքում, յերբ նրան մասնակից լինեն աշ-
խատավոր մասսաների ամենալաչն խավերը: Սակայն
այդ պայմանը համարյա անիրագործելի չե առանց
վճարաբ խորտակելու. բյուրոկրատիկ տրագիցիաներն
աշխատավորների կուլտուրական նվազագույն պա-

հանձների սպասարկման դործում: Գյուղատնտեսութեան կողմնակիցութեամբ, կուլակի դեմ հաջող հարձակումը, արդյունաբերութեան ինդուստրիացումն ընդհուպ դեմ են առնում անգրագիտութեան վերացման և մեր կուլտուրական աշխատանքի տարրական ձևերի զարգացման հարցին:

Սակայն, դրա հետ միասին, նկատվում է չարչիական վերաբերմունք մեր խորհրդային ապագայ տի տնտեսավարական միջանի շրջանների կողմից հանդեպ այս աշխատանքի: Այդ տեսակ վերաբերմունքը տեղ-տեղ թափանցում է նաև մեր կուլտուրական կարիքներին սպասարկող հիմնարկությունները: Դրանից է բղբում մեր կուլտաշխատանքի տարրական ձևերի վորոշ թերագնահատման փաստը. դրանից է անգրագիտության վերացման վերաբերյալ կուսակցության դիրքակալի չկատարվելը: Պետք է ամենայն վճռականությամբ հարվածել այդ տրամադրությունները, ամենամոտիկ իսկ ժամանակում լայն ծավալել լիկկայանների ցանցը, պատշաճ բարձրության վրա դնել խրճիթ-ընթերցարանների գործը, վերածելով վերջիններս գյուղի իսկական կուլտուրական ոջախներին, վորոնք կարողանան ճիշտ և ժամանակին վերահասու դարձնել գյուղացիներին մեր կուսակցության քաղաքականությունը:

14. Հասարակակաճ կազմակերպություններ.— Հասարակական կազմակերպությունները, ինչպես, որինակ՝ ՄՈՊՐ-ը, ՊԱՋԸ-Ա. վիճակում, շեֆընկերությունները, անասնաբույժների միությունը և այլն, իրենց աշխատանքով զգալիորեն յիտ են մնում կուսակցության հերթական խնդիրներից: Թույլ է այդ կազմա-

կերպություններում ղեկավարող ակտիվ կադրեր ստեղծելու աշխատանքը: Չնայած վոր այդ կազմակերպությունները վերին աստիճանի կարևոր տեղ են գրավում մեր մասսայական ագիտացիոն աշխատանքի սխեմայում և միևնույն ժամանակ գործնական-կազմակերպչական աշխատանքի ասպարիզում, այդ ընկերությունները դեռևս թույլ են և հատուկ ուշադրություն են պահանջում կուսակազմակերպություններից:

15 Մամուլ.— Մամուլի ասպարիզում պետք է նշել հետևյալ եյական թերությունները:

Կարգի չի գցված հանրամատչելի մասսայական գրականություն սխեմայով հրատարակումը: Մինչև այժմ գոյություն չունի բրոշյուրային հանրամատչելի գրականություն մեր աշխատանքի հրատապ հարցերի մասին, միանգամայն անբավարար է կոլտնտեսությունների շինարարության, կոոպերացիային, չքավորական խմբակների աշխատանքին, կուլակի դեմ պայքարելու, արհմիությունների աշխատանքին և այլ կարևոր բնագավառներին վերաբերյալ գրականություն:

Մեր մասսայական պարբերական մամուլը («Մաճկալ», «Բանվոր», «Կզլ շաֆագ», «Ռանչպար», «Բաւրակ», «Ավանգարդ» որաթերթերը և «Հայաստանի աշխատավորուհի», «Աշխատանք» ու «Անասնաբույժ» ժուրնալները) բավարար չափով իրագեկ չի դարձնում իր ընթերցողներին կուսակցության ընթացիկ քաղաքականությունը, ստեղծ բացառություն կազմակերպչական աշխատանք չի կատարում ընթերցողների շրջանում և մինչև այժմ ել բանթղթակցական և գյուղթղթակցական լայն շարժում չի ստեղծել:

Ղեկավարող մամուլը, «Խորհրդային Հայաստան»

որաթերթը, «Լենինյան Ուղի» և «Կոմմունիստ» ղեկավար ժուրնալները, հիմնականում իրադրծում են նրանց առաջ կանգնած խնդիրները: Առաջիկայում անհրաժեշտ է որաթերթի գծով ուժեղացնել տնտեսական-արդյունաբերական հարցերի արծարծումը, բարելավել և ընդարձակել ինֆորմացիան Անդրկովկասյան Ֆեդերացիայի մասին, ավելի մեծ ուշադրություն նվիրել հակախորհրդային հոսանքների մերկացմանը, ավելի լավ հիմքերի վրա դնել ինքնաքննադատության արդյունքների ստուգման գործը:

Ժուրնալների գծով «Կոմմունիստ»-ն անհրաժեշտ է վերակազմել՝ տալով նրան գյուղական թեքում, «Լենինյան Ուղին» պետք է դառնա կուսակցության մարտական քաղաքական որդանը:

Գրական-գեղարվեստական, գիտական-հետազոտական, պատմական-քերթողական քննություն կրող մնացած բոլոր նյութերն անհրաժեշտ է կենտրոնացնել մի նոր ժուրնալում, վորի հրատարակումը պետք է այժմիական համարել:

16. Կենցաղային հին կապանքները վոչնչացնելու ձգտող կուլտուրական հեղափոխության հիմնական խնդիրներից մեկն է կրոնական նախապաշարունակների դեմ պայքարելը: Ֆեկեդեցին, վորպես հակախորհրդային ուժերի ամենաուժեղ ողակներից մեկը, վերջին տարիներս աշխուժացրել է իր գործունեությունը ամբողջ Միության մեջ: Այսպես կոչված «նոր» չեկեդեցին հարմարվում է խորհրդային պայմաններին, փորձում է աշխատանքի նոր մեթոդներ և ձևեր գտնել, մանավանդ յերիտասարդության և կանանց շրջանում: Կրոնի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է

ամենալայն չափով ծավալել հակակրոնական պրոպագանդը, մերկացնելով թե հին և թե նոր չեկեդեցին և աղանդավորությունը:

Անհրաժեշտ է բանվորա-գյուղացիական մասսաների լայն խավերին կոնկրետ որինակներով բացատրել կրոնական ուժեղացող ագիտացիայի դասակարգային ելույթունը: Անաստվածների միութունը պետք է ամեն կերպ ուժեղացնի իր գործունեությունը: Այդ ֆրոնտին կուսակցությունը պետք է հատուկ ուժեր տրամադրի: Անհրաժեշտ է նաև վերջ տալ անտարբեր վերաբերմունքին դեպի «Անաստված»-ի աշխատանքը և լայնորեն ոժանդակել նրան:

III

17. Մեր աշխատանքի մեջ կարևոր տեղ է գրավում սոցիին և միջնակարգ դպրոցը:

Մեր դպրոցը միշտ բացեր ունի թե իր դասաւորների կուսակցական միջնախավի և թե ուսուցման վորակի, ինտերնացիոնալ դաստիարակության, հակակրոնական պրոպագանդի, ինչպես և սովորողների սոցիալական կազմի և ուսուցչության շրջանում կատարվող աշխատանքի տեսակետից:

Մեր դպրոցը անկրոնական և վոչ նացիոնալիստական լինելով, դեռ հակակրոնական և ինտերնացիոնալ չի դարձել և միևնույն ժամանակ ուսուցման գործի ամբողջ բնույթով չի կարողացել իրագործել մեր խորհրդային կադրերը պատրաստելու խնդիրը:

Անհրաժեշտ է՝

ա) Վորպեսզի համապատասխան առարկաների դասավանդումը դպրոցում թափանցված լինի հակա-

կրօնական նշութերով. նույնը նաև ինտերնացիոնալ դաստիարակության նկատմամբ: Յեթե այնպիսի առարկաներ, ինչպիսիք են բնագիտությունը, քիմիան և պատմական առարկաները, կարող են հիանալի նշութ հանդիսանալ հակակրօնական պրոպագանդի համար, նույնպես ել հասարակադիտական-տնտեսական բոլոր առարկաները կարող են նշութ հանդիսանալ աշակերտների ինտերնացիոնալ դաստիարակության համար, նրանց դաստիարակելու հակապրոլետարական բոլոր իդեոլոգիաների դեմ անհաշա կռիվ մղելու վոգսով:

բ) Ուժեղացնել ուշադրությունը դեպի ուսուցչության շրջանում կատարվող աշխատանքը, թե՛ նրանց վերապատրաստման և թե՛ կուսակցական միջնախավի ուժեղացման գծով:

գ) Միջանի դասագրքեր դեռևս թափանցված են շովինիստական-քաղքենիական իդեոլոգիայով. անհրաժեշտ է ամենալուրջ կերպով հետամուտ լինել մեր գլոբալական ձեռնարկների հարազատությանը:

դ) Պետք է լուրջ ուշադրություն դարձնել դպրոցական և հասարակական գրադարանները մաքրելու և լրացնելու գործի վրա: Մինչև այժմ գրքերի մեծ մասն իդեոլոգիական տեսակետից դաստիարակության համար անընդունելի նշութ են հանդիսանում:

ե) Ամրացնել այս տարվա դպրոցական ընդունելությունների ժամանակ նկատված առողջ բեկումը դեպի դասակարգային հստակ գծի կիրառումը, վորն ամեն կերպ խրախուսում է բանվորների, չքավորների և բուրժուական չրեխաների ընդունելությունը: Անհրաժեշտ է մշակել ֆինանսական ոգնության միշտ բուռններ, վորոնք կգյուրացնեն աշակերտների սոցիա-

լական կազմի բարելավման հնարավորությունները: Դրա հետ միասին պետք է վերացնել Լուսսոյի կոմաթ միգանի ողբանգեում արտահայտված աճուլաթեի այն յեթեվույթերը, վորով այս ատի չափազանց սահմանափակվեց միջակերի յեթեխաների գյուրց բնգուցվելը:

զ) Անհրաժեշտ է թե՛ անմիջական ուսման գծով և թե՛ աշակերտական կազմակերպությունների ու աշակերտների գործնական պարապմունքների գծով մշակել միշտ միջոցներ, վորոնք ամենանպաստավոր պայմաններ և միջոցներ ստեղծեն թե՛ ինտերնացիոնալ դաստիարակության համար, և թե՛ վերացնելու աշակերտների վորոշ կտրվածությունը մեր սոցիալիստական շինարարության գործնական կարիքներից:

IV

18. Դասակարգային թշնամի ուժերի ալտիվությունը կուսակցությունից պահանջում է վճռական պայքար մղել թե՛ մեր տնտեսական շինարարության և թե՛ մեր կյանքի բազմազան բնագավառների հարցերը լենինյան հստակությամբ առաջադրելու համար: Այդ աշխատանքը պետք է տարվի վոչ միայն ուժեղացնելով մեր կազմակերպությունների գգնությունը սոցիալիստական շինարարության բոլոր հանգուցային կետերում, այլ և բարձրացնելով մեր առջև կանգնած պրոբլեմներին մոտենալու և նրանց լուծելու տեսակետ:

Անհրաժեշտ է՝

Ավելի զարկ տալ մեր տնտեսական զարգացման պրոբլեմների տեսական մշակման: Մինչև այժմ մենք

չունենք քիչ թե շատ լուրջ մարքսիստական աշխատանք Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի եկոնոմիկայի մասին: Մենք չունենք Հայաստանի գյուղի դասակարգային պայքարի կոնկրետ ձևերը քննող մի աշխատանք, չունենք, վերջապես, տնտեսական մի լուրջ աշխատանք, վորը, բացի պաշտոնական գերատեսչային տվյալներից, ցույց տար մեր քաղաքականության ազդեցությունը մեր յերկրի տնտեսական զարգացման ընթացքի վրա:

Անպայման պետք է կադմտկերպիլ մեր զարգացման պատմական պրոբլեմները մշակելու աշխատանքը: Անդրկովկասի, Հայաստանի պատմությունը, Անդրկովկասի հեղափոխական բանվորական շարժման պատմությունը և այլն, համարյա չեն լեռնաբերվել մարքսիստական հետազոտություն, այնինչ այդ բոլոր պրոբլեմները, վորոնք ժամանակին լուսաբանվել են ազգային-ռոմանտիկական, տերտերական-իրեալիստական, բուրժուական հայեցակետերով, դեռևս միակ ձեռնարկն են հանդիսանում նոր սերունդների համար:

Ամբողջ աշխատանք կոչված «կլասսիկ» գրականությունը (Բաֆֆի, Պատկանյան, Ահարոնյան և հայ ուսումնականության ու ազգային ռոմանտիզմի մյուս յերգիչները) դեռ սպասում են իրենց քննադատներին:

Այս և մյուս բոլոր բնագավառներում գիտություն տեսական ամբողջությունները նվաճելու համար մեր մղած պայքարում մենք Հայաստանում Հափաղանց յետ ենք մնացել: Մեր շինարարությունը վերականգնման շրջանը և նրան ուղեկցող դասակար-

գային թշնամի ուժերի ակտիվություն ուժեղացումը հրամայաբար պահանջում են մեզանից ուժեղացնել տեսական աշխատանքը: Նույնիսկ ամենավերացական տեսություն հարցերը տվյալ շրջանում վերին աստիճանի գործնական բնույթ են ստանում, հարցեր, վորոնք չլուծած՝ մենք չենք կարող հաջող կերպով առաջ ընթանալ: Այդպես են գյուղի շերտավորման հարցերը, վարձակալական հարաբերությունների, մեր կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների, մեր կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների շինարարություն տեսակի և եկոնոմիկայի հարցերը, իսկ արդյունաբերության գծով՝ աշխատավարձը, աշխատանքի արտադրողականությունը, պլանավորման, ռացիոնալացման և շրջանացման պրոբլեմները, տնայնագործական արհեստների զարգացման հարցերը և այլն, ապա այն հարցերը, վորոնք կապված են կրոնական հոսանքների, Դաշակցություն և հակախորհրդային խմբակների և հոսանքների հետ, վորոնց աշխարհում պետք է հարվածել առանձնապես ուժեղ թափով, մերկացնելով աշխատավորների առաջ նրանց պատմական անցյալը, ներկայիս կապակցությունը յերևան հանել նրանց գործունեությունը:

Միանգամայն պարզ է, վոր այս բոլոր խնդիրները սերտորեն կապված են մարքսիզմի-լենինիզմի ընդհանուր մեթոդոլոգիայի մի շարք պրոբլեմների մշակման հարցի հետ, առանց վորի դժվար է ճիշտ լուծում տալ գործնական հսկայական նշանակություն ունեցող տեսական դժվարագույն պրոբլեմներին. ուստի անհրաժեշտ է՝

ա) Ամեն կերպ խրախուսել գիտական ընկերությունների ստեղծումը, նպատակ ունենալով մշակել

գիտության ալիսայլ բնագավառների հարցերը: Այդ տեսակետից անհրաժեշտ է հասունացած համարել մարքսիստ-պատմագետների, տնտեսագետների և մատերիալիստների գիտական ընկերությունների ստեղծելու հարցը:

բ) Գիտական շահագրգռությունն աշխուժացնելու, անկուսակցական ինտելլիգենցիային դեպի գիտական-հետազոտական աշխատանքը գրավելու համար անհրաժեշտ է պատշաճ բարձրության վրա դնել դասախոսային լայն աշխատանքը թե մարքսիզմի ընդհանուր մեթոդոլոգիայի հարցերի, թե մեր շինարարության առանձին պրոբլեմների շուրջը:

գ) Դպրոցներում և ԲՈՒՀ-երում տնտեսական և ընդհանուր մեթոդոլոգիական գիտությունների դասավանդումը պետք է կենտրոնացնել կոմունիստների ձեռքը:

դ) Անհրաժեշտ է լայն ծավալել մարքսիզմի-լենինիզմի ուսումնասիրության գործը: Վերակազմված Գիտություն և Գեղարվեստի Ինստիտուտն այդ իմաստով պետք է գիտական մտքի իսկական կենտրոնը դառնա:

ե) Հատուկ ուշադրություն պետք է նվիրել մարքսիզմի կլասսիկների, Մարքսի, Ենգելսի, Լենինի, Պլեխանովի փիլիսոփայական և տնտեսական աշխատությունների թարգմանությանը:

զ) Հրատարակվող պարբերական գրականությունը, ինչպես, որինակ՝ «Գիտական Ինստիտուտի Տեղեկատուն», «Համալսարանի տեղեկատուն», պետք է լայն ասպարեզ հանդիսանան Հայաստանի գիտական և մարքսիստական մտքի ստեղծագործությունների համար:

է) Այդ ամբողջ մեծ գործի մեջ խոշոր տեղ է գրավում համալսարանը, վորպես հիմնական մի շտեմարան, վորը պետք է յերկրին անհրաժեշտ կադրեր մատակարարի կուլտուրական ֆրոնտի և սոցիալիստական ամբողջ շինարարության համար:

Սակայն մեր համալսարանը դեռ այնքան էլ չի կարողանում բավարարել այդ խնդիրները:

Ուսման և դասավանդման մեթոդների վորակի հարցերը, համալսարանի աշխատանքի համաձայնեցումը մեր իրականության հետ — դեռ բավականին հեռու չեն լուծումն ստանալուց:

Համալսարանի սոցիալական կազմը վորոշ չափով լավացել է միայն շնորհիվ այս տարվա ընդունելության, սակայն ուսանողական կազմակերպությունների հասարակական-քաղաքական աշխատանքը, վորը պետք է ուսանողական մասսաներին ստեղծաբար մասնակցը դարձնի խորհրդային հասարակության աշխատանքին, դեռ կարգի չի գցված, գիտական աշխատանքի ասպարիզում կոմունիստական նոր ուժեր պատրաստելու հիմնական ձևը, ասպիրանտուրան դեռ չափազանց թույլ է թե այդ աշխատանքի համար առաջ քաշված կոմունիստների թվով, և թե նրանց ուսուցման գործի կազմակերպման տեսակետից:

Այս բոլոր հարցերի վրա անհրաժեշտ է ամենաուրելջ ուշադրությունը դարձնել:

19. Իդեոլոգիական ճակատում մղվող պայքարի այս բոլոր բարդ խնդիրները լիակատար չափով կարող են լուծվել սոսկ այն դեպքում, չերը ուղիղ և կատարված բոլոր ուժերի մոբիլիզացիան, և յերբ կազմակերպչորեն տմրացված ու ձևավորված է վորջ իդեոլոգիական ճակատը:

Ամբողջ աչք գործում կենտրոնական տեղը կուսակցութեանն ե պատկանում: Նա պետք ե ճշտորեն ուրվագծի ամբողջ ճակատը, դասավորի Կոմյերիտմիութեան, արհմիութեանների, կանանց ե խորհրդային անկուսակցական ինտելիգենցիայի ուժերը ե այսպիսով իրապես հանդես գա առաջնորդի, ղեկավարի դերում: Այս մեծ արշավում կուսակցութեանն իվիճակի կլինի կատարելու առաջնորդի դերն այն ժամանակ միայն, չերբ զգալի չափով կուժեղացնի կուսակցութեան անդամների քաղաքական ե կուլտուրական մակարդակի բարձրացման աշխատանքը, չերբ նա այնպիսի դրութեան կհասնի, վոր «չուրաքանչիւր կուսակցական ամբողջ գլխով բարձր լինի անկուսակցական բանվորից ե գյուղացուց», չերբ նա կհաջողեցնի կուսակցական ակտիվի կադրերի տեսական մակարդակի անընդհատ ե բուռն աճումը:

Անհրաժեշտ ե՝

ա) Ավելի ուշադրութեան, ուժեր ե միջոցներ հատկացնել կուսակցական լուսավորութեան խնդիրներին:

բ) Լայն կերպով ծավալել ընթացիկ քաղաքականութեան ե լենինիզմի առանձին պրոբլեմների ուսումնասիրութեան ստորին խմբակները:

գ) Կազմակերպել կուսակցականների ինքնազարգացման ե ի բացակայս (заочный) կրթութեան գործը:

դ) Ընդարձակել կուսակցական ե խորհրդային ապագաբան աշխատավորների վերապատրաստման կարճատև կուրսերի պրակտիկան:

ե) Յերեանում, վորտեղ կան կոմունիստ գիտական աշխատավորների կադրեր, ստեղծել գիտական

հետազոտող խմբակներ՝ մեր պաշտարի առանձին պրոբլեմների մշակման համար: Նրանց մասնակցութեանն ու դիկավարութեանը գիտական ընկերութեաններում համարել պարտադիր:

զ) Ընդարձակել կուսակցութեան ստորին ակտիվի համար կատարվող լեկցիոն աշխատանքները՝ լենինիզմի ե ընթացիկ քաղաքականութեան հիմնական խնդիրների վերաբերմամբ: Այդ նպատակով Յերեանում ե Լենինականում հիմնել կիրականորա համալսարաններ:

է) Անշեղորեն կիրարկել «վոչ մի կուսակցական առանց տեսական ուսուցման» լոզունգը, վճռականապես մտքառել արհամարհական վերաբերմունքի դեմ թեորիայի հանդեպ:

20. Ինչպես Կիստիկովի, այնպես ել գավկոմների ագիտպրոպ բաժինները պետք ե կենտրոնացնեն իրենց մոտ կուսլուսավորութեան գործի ինչպես մեթոդական, այնպես ել կազմակերպչական ամբողջ ղեկավարութեանը: Այդ նպատակով ինչպես կենտրոնում, այնպես ել տեղերում վորակալ ղեկավարներից անհրաժեշտ ե կազմակերպել մեթոդական բյուրոներ, առարկայական հանձնաժողովներ ե կուսկրթական խնդիրներն անմիջականորեն մշակող այլ ոժանդակ կենտրոններ:

21. Արդիտացիայի, պրոպագանդի ե մամուլի բաժինները ներկայումս չեն կարող սահմանափակվել սոսկ կուսլուսավորութեամբ. նրանք պետք ե ստանձնեն չերկրում ծավալվող ամբողջ կուլտուրական աշխատանքի ղեկավարութեանը: Վորպես իրապես իդեոլոգիական կենտրոններ ագիտպրոպ-մամուլի բաժիններն ամենալուրջ վերաբերմունքն են պահանջում: Նրանց

աշխատանքն ամբողջ կուսակցութեան ուղադրութեան կենտրոնում պիտի լինի: Աշխատանքի այդ բնագավառը պետք է ուղարկել ամենավերակշիռ և պատրաստված կուսկազմակերպիչներին:

22. Ամբողջ այդ ուսուցման, խնչախու և կուսակցութեան ամբողջ պրակտիկ աշխատանքի միջով կարմիր թելի նման պետք է անցնի անհաշտ պայքարն ընդդէմ ամօն տեսակ թեքումների կուսակցութեան լեւինյան ուղիղ գծից:


Թեքումների արտահայտութեանները մեր կյանքի բոլոր բնագավառներում առաջին հերթին պետք է դրսևորել և մերկացնել մասսաների առջև՝ կուսակցական մասսաներին և աշխատավորութեան լայն խավերին ուղիղ, ճշգրիտ կողմորոշում տալու համար:

23. Բոլոր հիմնական «շարժիչ փոկերը» — կոմյւնիստիութեանը, արհեստակցական միութեանները, կինկազմակերպութեանները և հաս. կազմակերպութեանները պետք է ուժեղացնեն ամեն տեսակ թեքումների և ազավաղումների դէմ մղվող պայքարի աշխատանքն՝ իրենց անդամների իդեոլոգիական դաստիարակման գծով, բարձրացնեն իրենց անդամների քաղաքական մակարդակը, վերլուծիտե միայն այս դեպքում է, վոր նրանք կարող են հաջողութեամբ ի կատար ածել կուսակցութեան կողմից նրանց վրա դրված իդեոլոգիական պայքարի բարդ խնդիրները:

24. Բարձրացնել մասսաները մեր չերկրի սոցիալիստական հաջող վերակառուցման համար անհնարին է առանց աշխատավորական ամենալայն մասսաների իրական մասնակցութեան, առանց ինքնաքննադատութեան լոզունգի իրական կենսագործման մեր աշխա-

տանքի այդ բնագավառում: Ուսուցման խնդիրները, մեր հրատարակութեաններին, մամուլին, կուսլուսավորութեան, ժողովրդական կրթութեան և ամբողջ մեր կուլտուրական գործի կազմակերպման խնդիրները — լայն մասսաների քննութեան և մասսայական ծավալուն քննադատութեան առարկան պիտի դառնան: Միայն այս ճանապարհով է, վոր մենք ի վիճակի կլինենք կարգավորել կուլտուրական հեղափոխութեան հսկայական աշխատանքները և նորանոր և վճռական նվաճումներ ձեռք բերել իդեոլոգիական պայքարի կարևորագույն ֆրոնտում:





Задачи К. П. (б) А. на
идеологическ. фронте



ԳԻՆԸ 12 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0186611

